

ՀՀ Արմավիրի մարզի Վարդանաշեն գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

1.ՀՀ Արմավիրի մարզի Վարդանաշեն գյուղական համայնքի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար /ծածկագիր 1.2-1/ :

Աշխատակազմի քարտուղարը համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է ՏԻՄ ռազմավարական և կազմակերպչական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը, լուծում աշխատակազմի առջև դրված գործառնություններից բխող հիմնախնդիրներ, ընդունում որոշումներ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության առնվազն առաջատար պաշտոնների 2-րդ ենթախմբի պաշտոններում կամ դրանց համապատասխանող՝ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա համայնքային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ առնվազն հինգ տարվա հանրային ծառայության ստաժ և համայնքային ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճանին համապատասխանող՝ պետական ծառայության դասային աստիճան /կոչում/ կամ վերջին չորս տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երեք տարվա փորձ կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ:

- Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն: Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարած մրցույթը կկայանա 2015 թվականի հոկտեմբերի 29-ին ժամը 12:00-ին Վարդանաշեն գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Վարդանաշեն գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/
- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի /պաշտոնները/ բնօրինակների հետ միասին.

- հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թ-ի մարտի 3-ի համար N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
- հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները.
- մեկ լուսանկար 3\*4 չափսի.
- անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Վարդանաշենի գյուղապետարան (գ. Վարդանաշեն, 1-ին փողոց, 26 շենք) կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ(հասցե՝ ք. Արմավիր, Աբովյան 71, հեռախոս՝ /0237/-2-07-70, 2-76-49) հարցերով վարչություն:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-17:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումներ ընդունման վերջնաժամկետն է 2015 թվականի հոկտեմբերի 7-ը: